

**«Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանի ելույթը Տավուշի մարզպետարանում տեղի ունեցած «Առողջ սկիզբ» ծրագրի ամփոփում-քննարկմանը 12.07. 2013թ.**

Հարգելի գործընկերներ

Հարգելի պարոն նախագահող

Ներառական կրթության վերաբերյալ գաղափարները «Տավուշի մարզում սկսել են քննարկվել 1999 թվականից, երբ մարզում սկսեցին գործել «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կենտրոնները /1999թ-ից Դիլիջանում, 2003թ-ից՝ Իջևանում, 2004թ-ից՝ Բերդում, 2005թ-ից՝ Նոյեմբերյանում/: Տարածքներում գործող «Երեխայի զարգացման կենտրոններում» հաշվառված էին 405 երեխաներ: Անհրաժեշտություն էր առաջացել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի լիարժեք իրացումը կազմակերպել անկախ նրա բնակության վայրից: Ներառական կրթության գաղափարների իրականացումը առավել իրական դարձավ, երբ 2005 թվականին ընդունվեց «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքը: Օրենքում «Ներառական կրթությունը» ամրագրված էր որպես կրթության կազմակերպման ձև: Հաշմանդամ երեխաների կրթական խնդիրների լուծմանն ուղղված բազմաթիվ ծրագրերից մեկը «Ներառական կրթության կարողությունների զարգացումը» ծրագրի մեկնարկն էր Տավուշի մարզում: Համագործակցված թիմային աշխատանքի արդյունքում մարզի հանրակրթական դպրոցներում իրականություն դարձան հաշմանդամ և կրթական դժվարություններ ունեցող երեխաների հասանելի և հավասար կրթական հնարավորությունները: Հուսով էինք, որ արդյունքները լինելու են այնպիսին, որ ներառական կրթությունը դառնալու է համընդհանուր հանրակրթական ձև մարզի բոլոր դպրոցներում: Մեծ ջանքեր պահանջվեցին հասարակության մեջ ճիշտ վերաբերմունքի ձևավորման, հաշմանդամության հիմնախնդրի իրազեկման և ներառական կրթության կարևորության գիտակցման ուղղությամբ:

Ներառական կրթությունը Տավուշի մարզում 2006 թ-ից սկսվեց իրականացվել չորս դպրոցում /Իջևանի թիվ 3, Դիլիջանի թիվ 2, Նոյեմբերյանի թիվ 2, Բերդի թիվ 2/ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ, իսկ 2009թ-ին «Կրթության և գիտության նախարարության, Տավուշի մարզպետարանի, «Առաքելություն Արևելք» միջազգային բարեգործական կազմակերպության և «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության միջև կնքված փոխընթացման հուշագրով սկիզբ դրվեց ներառական կրթության իրականացման աշխատանքներին մարզի բոլոր համայնքների դպրոցներում: Ծրագրի շրջանակում կազմակերպվել և իրականացվել են մարզի դպրոցների ուսուցիչների ներառական կրթության տեսության և կիրառման հարցերով վերապատրաստումներ: Աշխատանքներ են տարվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հայտնաբերման, տվյալների հավաքագրման և գրանցման, ինչպես նաև դպրոցների տեղեկատվական ռեսուրս-սենյակների վերանորոգման և կահավորման աշխատանքների իրականացման ուղղությամբ: Նշված

համաձայնագրի շրջանակում, բացի հատուկ մանկավարժների հաստիքները, ներդրվեց նաև ուսուցչի օգնականի հաստիքը, ովքեր մատուցում են բազմապիսի ծառայություններ դասապատրաստման, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ անհատական աշխատանքների, մանկավարժական օգնության, ծնողներին խորհրդատվության, միջոցառումներում երեխաների ընդգրկման հետ կապված: Սկզբում նախատեսվել էր ծրագիրն իրականացնել մարզի 50 հանրակրթական դպրոցներում: Բազմաթիվ քննարկումները, խորհրդատուների և մասնագետների հետ հանդիպումները, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողների կարծիքները հաշվի առնելով՝ որոշվեց ծրագիրը տարածել մարզի բոլոր դպրոցներում: Տավուշի մարզի 62 համայնքներում իրականացվեցին հանդիպումներ համայնքների ղեկավարների, դպրոցների տնօրենների, բուժական հիմնարկների ղեկավարների հետ, ներկայացվեց ներառական կրթության գաղափարը և համագործակցության կարևորությունը: Իրականացվեցին երեխաների կարիքների գնահատման աշխատանքներ, 77 դպրոցների տարրական և միջին դասարանների 1600 ուսուցիչների համար կազմակերպվեցին վերապատրաստման դասընթացներ, վերապատրաստվեց շուրջ 270 հոգեբան-մանկավարժ, 50 դպրոցներում վերանորոգվեցին և հագեցվեցին ռեսուրս-սենյակները, ստեղծվեցին ծնողական փոխօգնության խմբեր, վերապատրաստվեց 1562 ծնող, որոնց համար կազմակերպվեցին սեմինարներ և կոնֆերանսներ:

Մոտ 1400 երեխա անցավ հոգեբանամանկավարժական կարիքների գնահատում: Այս պահին մարզի դպրոցներում սովորում են հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 970 երեխաներ, որից վկայագրված է 347 աշակերտ: Վերապատրաստումներ են կազմակերպվել դպրոցների հատուկ մանկավարժների և ուսուցիչների համար, ստեղծվել է երեխաների հաշվառման տեղեկատվական համակարգ:

«Կառավարության 27.01.2011թ. թիվ 46-Ն որոշման համաձայն 2011թ-ից մարզի բոլոր դպրոցներն անցան ներառական կրթության համակարգի: Սկզբի դժվարությունները հաղթահարեցինք համագործակցված թիմային աշխատանքի շնորհիվ, որի համար այս ամբիոնից իմ շնորհակալությունն եմ հայտնում մեր բոլոր գործընկերներին այս կարևոր գործընթացում մեզ աջակցելու համար: Ժամանակ էր պետք, որպեսզի բոլոր ուսուցիչները, անկախ նրանից, թե ինչ առարկա են դասավանդում, ձեռք բերեն անհրաժեշտ հմտություններ ցանկացած կրթական պահանջ ունեցող երեխայի համար: Վերապատրաստումների, տեղերում կազմակերպված աշխատանքի, մեթոդական խորհրդատվությունների արդյունքում հաղթահարվեցին սկզբնական դժվարությունները: «Ներառական կրթության» մուտքով աշակերտները հայտնվեցին հասարակության ուշադրության կենտրոնում, բացի գիտելիքներ ստանալուց աշակերտը սկսեց պատկերացնել իր դերը հասարակական կյանքում :«Ներառական կրթությունը» միայն անվանում չէ, դա գործողությունների շարք է, պատասխանատվություն ապագայի և նոր սերնդի ձևավորման հարցում:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները դարձան իրավահավասար բոլոր երեխաների հետ, նրանց տրվեց հնարավորություն բացահայտելու իրենց բոլոր ունակությունները, առավել ուշադրություն դարձվեց երեխայի ուժեղ կողմերը զարգացնելուն, որի արդյունքում երեխայի ընտանիքը դադարում է խուսափել իր երեխայի՝ միջավայրի հետ շփումից:

Այս ամենը նոր գաղափար էր ոչ միայն դպրոցի այլև համայնքի և ընդհանրապես ամբողջ հասարակության համար: Դրականորեն փոխվել են հարաբերությունները դպրոցի, ծնողի և հասարակության միջև: Դպրոցը դառնում է մեզ համար կարևոր խնդիրների լուծման խրախուսող, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան հայտնվում է գործընթացի կենտրոնում:

Վստահորեն կարող ենք նշել, որ ծրագիրը, միանշանակ, հասել է իր նպատակին: Ներառական կրթությունը Տավուշի մարզի դպրոցներում դարձել է իրականություն և արդեն տվել է իր արդյունքները, ինչպես անհատական մակարդակում, այնպես էլ համայնքում՝ հաղթահարելով առկա կարծրատիպերը մարդասիրական արժեքների տարածման և ամրապնդման շնորհիվ: Ծրագրի իրագործման ընթացքում առկա են ներառման բազմաթիվ հաջողված օրինակներ.

Մեծացել է երեխաների հաճախելիությունը,

Նվազել է երկտարեցիների թիվը,

Ստեղծվել է հանդուրժողականության մթնոլորտ յուրաքանչյուր դպրոցում:

Տավուշի մարզում երեխաներն ապրում են իրենց ընտանիքներում և կրթություն են ստանում իրենց իսկ համայնքի դպրոցում:

Կարելի է վստահորեն արձանագրել, որ ծրագրի շարունակականությունն ապահովված է: <<Ներառական կրթության>> իրականացումը Տավուշի մարզում ցույց տվեց հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հասարակության լիիրավ անդամ դարձնելու անհրաժեշտությունը, որի արդյունքում շահում է ողջ հասարակությունը:

Խոսքս ավարտում եմ այն կարգախոսով, որ մենք հայտարարել ենք ծրագրի մեկնարկին՝ <<Միասին ապրել, միասին սովորել>>: Կարգախոս, որ դարձավ իրականություն: